Ռուսական մշակույթի գործիչները հայ ժողովրդի մասին

Ռուս անվանի բանաստեղծ, թարգմանիչ, հրապարակախոս, հասարակական գործիչ Սերգեյ Գորոդեցկու (1884-1967) անունը քաջ հայտնի է հայ ժողովրդին: Նրա նախահեղափոխական և ետհեղափոխական կյանքի առաջին տարիները սերտորեն կապված են Արևմտյան Հայաստանի և Անդրկովկասի հետ:

1916 թվականի գարնանը, որպես քաղաքների միության գործիչ և «Ռուսկոյե սլովո»-ի («Ռուսական խոսք») թղթակից, նա ուղարկվում է Կովկասյան ռազմաճակատ: Այստեղ, Արևմտյան Հայաստանում, որտեղ թուրքական կառավարությունը կազմակերպել էր հայ ժողովրդի ցեղասպանությունը, Գորոդեցկին եռանդուն գործունեություն է ծավալում բնակչությանը պարենով ապահովելու, փախստականներին բուժօգնություն ցույց տալու, որբերին փրկելու ուղղությամբ, ապաստարաններ է բացում նրանց համար: Հայ ժողովրդի նկատմամբ ջարդարարության և դաժան հաշվեհարդարից ոուս բանաստեղծի տպավորությունները ահ ու սարսափ են առաջ բերում: Նրա բանաստեղծական մտքերը Արևմտյան Հայաստանի մասին («Գետակների և հրաբուխների երկրում»), հոդվածների շարքը, «Հայաստանի հրաշքը» բանաստեղծությունների գրքույկը, «Սեմիրամիդայի այգիները» անավարտ վեպը, որ գրվել են մղձավանջային տեսիլքների նյութերի հիման վրա, ընթերցողին ներկայացնում են այդ երկրի և նրա ժողովրդի ողբերգական ճակատագիրը:

«Սակայն, երբեք չեն զոհվում այն ժողովուրդները, որոնք կարողանում են ծանրագույն փորձանքների և ստորացումների թոպեներին պահպանել իրենց ազգային արժանապատվությունը: Չի զոհվի նաև Հայաստանը»,— լավատեսորեն գրում է Ս. Գորոդեցկին:

Ս. Գորոդեցկու հոդվածների շարքում հատուկ տեղ է գրավում նաև նրա սակավ հայտնի «Ղարաբաղ» հոդվածը, որը գրվել է 1919 թվականին («Կավկազսկոյե սլովո», 23 III 1919), որը և ներկայացնում ենք մեր ընթերցողների ուշադրությանը:

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ

ՂԱՐԱԲԱՂ

Ցուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ազգ ունի իր նվիրական հենարանը: Երբ ժողովրդի պատմությունը երջանիկ է դասավորվում, այն դառնում է մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոնը: Երբ նակատագիրը նալածում է ազգին, այն լինում է ազգային կյանքի պատվարը, հույսերի կոզին, վերածննդի գրավականը:

Հայաստանի համար հենց այս վերջին դերն էլ խաղացել և խաղում է Ղարաբաղ լեռնային մարզը:

Բնությունն ինքը նրան տվել է վիթխարի նշանակություն:

Այնտեղ, Կարսյան ու Սևանյան լեռնաստանների շարունակությունը հանդիսացող Ղարաբաղի անառիկ բարձունքներում ավելի քան երկու հազար տարիների ընթացքում հայ ժողովուրդը դիմացել է հոշվոր ցեղերի գրոհներին՝ պահպանելով իր մշակույթը, պաշտպանելով իր ազգային դեմքը:

Միանույն լինելով ազգագրորեն, տնտեսապես և լեզվական տեսակետից՝ Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան բերը: Այդպիսին եղել է անցյալում, այդպիսին է այժմ և այդպիսին կմնա հավերժորեն, քանի որ Հայաստանի սիրտը՝ դաշտն Արարատյան, անհնար է պաշտպանել, առանց տերը լինելու Ղարաբաղի: Պատմության երկար ընթացքին բազմիցս հարձակման ալիքները բախվել են Ղարաբաղի ամրությանը՝ նրա խորքը թափանցելով լոկ գետերի հովիտներով, այստեղ էլ չկարողանալով երկար մնալ: Հին ժամանակներում Սյունիք կոչված այս երկրամասի իշխանությանը ժառանգ մելիքությունները սեփական ուժերով վանել են թշնամուն: Պատմությունը կրկնվում է, և վերջին անգամ այդ էջ տեղի ունեցավ մեր աչքերի առաջ:

Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են ցայտուն արտահայտված մի տիպ: Սփռված ամբողջ աշխարհում՝ դարաբաղցիները հեշտությամբ կարող են ճանաչվել: Գործունեության լայն թափ, անձնազոհ քաջություն, վտանգալից խիզախության հակում, ինքնավստահություն, ինքնահատուկ համառություն, ուղղամիտ հաստատակամություն, նահապետականություն ընտանեկան կյանքում,— ահա ղարաբաղցու համակրելի գծերը, որոնք ասես խտացումն են հին հայկական առաքինությունների՝ խամրած պատմության դաժանություններից և մաքուր տեսքով պահպանված Ղարաբաղում: Վեհ, ամրապինդ այս ժողովուրդը, կյանքը փրկելու համար լեռները բարձրացած, պնդացել է լեռնային օդից և իրեն պաշտպանել այն վարակներից, որոնց ենթակա են դաշտաբնակները:

Հայաստանի ազգային հիշողությունը պետք է չմոռանա ղարաբաղցիների ո՛չ քիչ զրնգուն անուններ: Չկա մի բնագավառ, ուր նրանք դրսևորած չլինեն իրենց ձեռներեցությունն ու տաղանդը: Քաղաքականությունը, գրականությունը, հասարակական գործունեությունը, առևտուրը,— սրանք բոլորն ասպարեզ են եղել նրանց աշխատանքի համար: Կարելի էր բերել շատ օրինակներ: Դրա համար, չհավակնելով լիակատարության, նիշեմ մի քանի նշանավոր ղարաբաղցիների, որոնց անունները հայտնի են բոլորին. հասարակական գործիչներից իրենց ծննդով Ղարաբաղին են պարտական Արամ Փաշան, Սաֆո Սահակյանը: Ռազմական արվեստին Ղարաբաղը գեներալ Լազարև է տվել: Արդյունաբերությունը ևս իր շարքերում ունի ոչ քիչ ղարաբաղցիներ, օրինակ, ղարաբաղցի է եղել Կոստյա Համբարձումյանը: Գրականությունը ևս ունի շատ ղարաբաղցիներ. Լեոն, Մոսկվայի «Հայկական լրաբերի» հրատարակիչ Ամիրովը: Վերջապես հայկական թերթերի մեծ մասը ղարաբաղցիներն են խմբագրում:

Այսքան ականավոր տղամարդ գործիչներ տված Ղարաբաղն ստեղծել է, ավելի հիշտ՝ մաքուր վիճակում պահպանել է նաև հին հայ կնոջ տիպը, որի հոգեբանության մեջ ու կենցաղում շատ բան է պահպանվել մայրատիրության դարաշրջանից:

Ամրակապված սեփական մշակույթին ու կենցաղին՝ Ղարաբաղը մեր օրերում էլ չի դավանանում իր հին փառքին: Ի մի հավաքելով իրենց ռազմաջոկատները, ինչպես Թամերլանի ժամանակներում, մելիքները պաշտպանեցին Ղարաբաղի անկախությունը: Նուր վա միջադեպը չփոխեց Նուրիփաշայի պարտության ընդհանուր պատկերը, և պաշտպանության գիծն ըստ էության մնաց անառիկ, ինչպես նախորդ արշավանքների օրերում:

Այսպիսին է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Անկասկած, եթե նա (Հայաստանը) կորցնի այն, ազգի ինքնորոշման գաղափարը կտուժի մեծապես: Եվ, հակառակը, տերը մնալով Ղարաբաղի, Հայաստանը կստանա եռանդուն մշակութային ուժ՝ հզոր ներհոսք, որը, ողողելով Հայաստանի ավեր տարածքները, կարգասավորի դրանք մշակույթով և դրանով էլ կավարտի Ղարաբաղի բազմադարյան փառավոր պատմությունը:

Ամեն մի ժողովուրդ իրենն է փնտրում: Վերածնված ազգերի ամբողջ ապագան կախված է նրանից, թե իրենք իրենց մեջ կգտնե՞ն արդյոք բավականաչափ սեփական ազգային մշակույթի, այսպես կոչված, թթխմորներ: Նման պայմաններում բոլոր այն կենտրոնները, որոնցում այս կամ այն պատճառներով խտացվել է մշակութային կյանքը, ձեռք են բերում բացառիկ նշանակություն: Այսպիսին է նաև Ղարաբաղի դերը Հայաստանի համար:

Ճիշտ է պատմությունը Հայաստանին հաշել է դեպի հարավ, դեպի տաք ծովը, և գուցե թե, այնտեղից կժայթքեն այնպիսի ուժեր, որոնք Ղարաբաղը կդարձնեն նոր Հայաստանի հյուսիսային ծայրամասը:

Բայց այս դեպքում էլ այն չի կորցնի իր նշանակությունը՝ իբրև անձեռնմխելի և դարերով ստուգված մշակույթի հիմնապաշար: